Հանդիպումներ Ստրասբուրգում

ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Եվրախորհրդի Նախարարների խորհրդի ներկայացուցիչների հետ հանդիպմանը մասնակցելու նպատակով օրերս աշխատանքային այցով Ստրասբուրգում էր գտնվում ՀՀ արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանը:

Ինչպես հայտնեցին ՀՀ ԱԳՆ հասարակայնության հետ հարաբերությունների վարչությունից, ելույթ ունենալով ԵԽ Նախարարների խորհրդի ներկայացուցիչների առջև՝ նախարար Վ. Օսկանյանը ներկայացրել է Հայաստանի ներքին իրավիճակը եւ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման ներկա ընթացքը:

Նախարարը հանդիպում է ունեցել Եվրախորհրդի գլխավոր քարտուղար Շվիմերի հետ: Հանդիպման ընթացքում երկուստեք հույս է հայտնվել, որ Հայաստանի անդամակցության գործընթացում խոչընդոտներ չեն լինի: Արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանը հանդիպում է ունեցել նաեւ Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Վ. Գուլիեւի հետ: Կողմերն անդրադարձել են Լեռնային Ղարաբաղի հարցին, նշվել է, որ երկու երկրների նախագահները կշարունակեն իրենց բանակցությունները՝ ընդունելի լուծում գտնելու նպատակով:

Հոկտեմբերի 13-ին նախարար Օսկանյանը հանդիպում է ունեցել ԵԽ Խորհրդարանական վեհաժողովի գլխավոր քարտուղար Հալլերի հետ եւ ելույթ է ունեցել ռասիզմի, ռասայական խտրականության, այլատյացության եւ հարակից անհանդուրժողականության դեմ պայքարին նվիրված համաժողովում: Հոկտեմբերի 14-ին նախարար Վարդան Օսկանյանը վերադարձել է Երեւան:

ԼՂՀ-ին Ադրբեջանի ներկայացրած մեղադրանքներն անհիմն են

ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հոկտեմբերի 9-ին Ադրբեջանի արտաքին գործերի նախարարությունը տարածել է հայտարարություն, որում անհիմն մեղադրանքներ է ներկայացնում ղարաբաղյան կողմին: Այս կապակցությամբ հոկտեմբերի 16-ին ԼՂՀ ԱԳՆ մամուլի ծառայությունը հանդես է եկել հայտարարությամբ՝ նշելով, որ այս անգամ Ադրբեջանի համար հարձակման թիրախ են դարձել դեռեւս սեպտեմբերի 3-ին ԼՂՀ եւ Հայաստանի Հանրապետության կառավարությունների միջեւ ստորագրված համագործակցության հուշագիրը, ինչպես նաեւ ԼՂՀ կառավարության կողմից մշակված եւ խորհրդարանի հաստատմանը ներկայացված օրինագիծը՝ հանրապետության վարչական շրջանների պատմական անունները վերականգնելու մասին: Հիշեցնելով, որ նույնիսկ խորհրդային ժամանակներում ԼՂՀ վարչատարածքային բաժանման հարցերն ամբողջովին գտնվում էին Լեռնային Ղարաբաղի իշխանությունների իրավասության շրջանակներում՝ ԼՂՀ արտգործնախարարությունը ներկա դրությամբ ԼՂՀ կառավարության առաջնահերթ խնդիրը համարում է Ադրբեջանի զինված ագրեսիայի չհաղթահարված հետեւանքների վերացումն ու ժողովրդի կենսագործունեության համար նորմալ պայմանների ստեղծումը, եւ «իր տարածքում արդյունավետ կերպով կառավարման գործառույթներ իրականացնող գործադիր իշխանության առանձնաշնորհն է այս կամ այն երկրի պաշտոնական եւ ոչ պաշտոնական կառույցների հետ համագործակցության ձեւերի ու մեթոդների ընտրությունը»: ԼՂՀ արտգործնախարարությունը միջազգային հանրության ու շահագրգիռ այլանների ուշադրությունը հրավիրում է այն հանգամանքի վրա, որ այս էլ որերորդ անգամ պաշտոնական Բաքվի ձեռնարկած քայլերը չեն համընկնում տարածաշրջանում խաղաղություն եւ կայունություն հաստատելու պատրաստակամության մասին նրա ղեկավարների հայտարարություններին: «Մենք ստիպված ենք,- ասված է հայտարարության մեջ,- ԼՂՀ սոցիալ-տնտեսական զարգացման արգելակմանն ուղղված Ադրբեջանի քաղաքականությունը որակել որպես անթաքույց թշնամանքի դրսեւորում: Հակամարտության կարգավորման ինչ «բարենպաստ պայմանների» մասին է խոսում Ադրբեջանը, երբ տեւական ժամանակ խափանում է բանակցային գործընթացը, մերժում ցանկացած խաղաղարար նախաձեռնություն եւ տնտեսական համագործակցության առաջարկություն՝ դրանով իսկ խոչընդոտելով հակամարտության մեջ ներքաշված ժողովուրդների միջեւ վստահության հաստատմանը»: Ափսոսանքով արձանագրելով, որ վերջին ժամանակներս Ադրբեջանի իշխանությունների համար գործելակերպ է դարձել նաեւ միջնորդ երկրների եւ միջազգային կազմակերպությունների մերկապարանոց քննադատությունը, որպես օրինակ բերվում են այն միտումնավոր արգելքները, որ պաշտոնական Բաքուն ստեղծում է Կարմիր խաչի միջազգային կոմիտեի եւ այլ միջնորդական առաքելությունների աշխատանքների համար, որոնք կողմերին աջակցում են լուծելու ղարաբաղյան հակամարտության մարդասիրական հիմնախնդիրները, մասնավորապես՝ անհայտ կորածների որոնման ու ռազմագերիների ազատագրման հարցերը:

«Միանգամայն ակնհայտ է, որ Ադրբեջանի Հանրապետության տարբեր կարգի պաշտոնական այրերի հերթական «աշխուժացումը» պայմանավորված է նախընտրական պատեհապաշտությամբ, որին զոհաբերվում է խաղաղարար գործընթացը: Հենց այդ հանգամանքն է խաթարում Ադրբեջանի՝ որպես բանակցություններում վստահելի գործընկերոջ հեղինակությունը, խոչընդոտում տարածաշրջանում կայունության հաստատմանը»,- ասված է հայտարարության մեջ: